



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ



Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 12 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ավետիսյանի կողմից ներկայացված 2022-2023 ուստարվա ԵՊԲՀ ուսումնական ստորաբաժանման աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար (հաշվետվությունը կցվում է) (23-10-12-01).

2. Հանձնարարել ԵՊԲՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ.Ավետիսյանին, «Բուժական գործ» կրթական ծրագրի ղեկավար Կ.Բ.Ենկոյանին, Ընդհանուր բժշկության ֆակուլտետի դեկան Կ.Մ.Բարոյանին, Կրթական ծրագրերի բաժնի պետ Ա.Վ.Բայկովին, համապատասխան մեթոդական հանձնաժողովներին և ամբիոնների վարիչներին.

1) Հաջորդող երեք տարիների ընթացքում ավարտել մոդուլների բովանդակային և ձևաչափային բարելավման աշխատանքները և 2024-2025 ուստարվանից աստիճանաբար սկսել կիրառել նաև չորրորդից վեցերորդ կուրսերում (23-10-12-02).

2) «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո վերանայել կրթական ծրագրերում առանձին կրթաբլոկների (ֆունդամենտալ,

բնագիտական, հումանիտար և սոցիալ-տնտեսական) ժամային բեռնվածությունը (23-10-12-03).

3) մշակել և ներդնել վերջնարդյունքների ստուգման նոր ձևեր՝ շեշտադրելով գործնական հմտությունների և կոմպետենցիաների ստուգման բարելավումը (23-10-12-04).

4) մշակել էլեկտրոնային առարկաների դասավանդման կարգ և հաջորդ 5 տարիների ընթացքում էլեկտրոնային առարկաների քանակը հասցնել 20-ի (23-10-12-05).

5) հետազոտական աշխատանքներում ընդգրկված ուսանողների քանակը յուրաքանչյուր տարի ավելացնել 10-20%-ով (23-10-12-06).

3. Հանձնարարել կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնին՝

1) վերանայել և 5 տարիների վերլուծության արդյունքներից ելնելով բարեփոխել «ԴՈԳ»-ի և «ԴՈԻԱ»-ի հարցաշարերը (23-10-12-07).

2) ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացվող ուսումնասիրությունները և դրանց ներդրման գործընթացները (23-10-12-08).

4. «Բուժական գործ» կրթական ծրագրում հետազոտական բաղադրիչի ներդրմամբ պայմանավորված, աշխատանքների կազմակերպման նպատակով, 2024 թվականի բյուջեում նախատեսել միջոցներ «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի հենքի վրա անհրաժեշտ միավորների ստեղծման և զարգացման, ինչպես նաև ուսումնասիրատարական փորձարարական վիրահատարանի բարելավման համար (23-10-12-09).

5. «Տեսական բժշկություն» կրթաբլոկի դասախոսների մասնագիտական վերապատրաստման նպատակով 2024-26 ուստարիներին համապատասխան ամբիոններից մեկական աշխատակից գործուղել եվրոպական կրթական տարածքի որևէ բժշկական բուհ հետազայում նրանց միջոցով տեսական ամբիոններում որակավորման դասընթացներ իրականացնելու նպատակով (23-10-12-10).

6. Հանձնարարել պրակտիկայի բաժնին՝

1) 2024 թվականի սեպտեմբերի 1-ից ներդնել ռոտացիոն կլինիկական պրակտիկայի մոդելը (23-10-12-11).

2) վերակազմավորել ուսումնական պրակտիկայի բաժինը՝ ներդրվող ռոտացիոն կլինիկական պրակտիկայի մոդելի ապահովումն իրականացնելու նպատակով (23-10-12-12).



7. Հանձնարարել «Բուժական գործ» կրթական ծրագրի ղեկավար Կ.Բ. Ենկոյանին, մեթոդական հանձնաժողովների նախագահներին՝

1) քննարկել գիտելիքների գնահատման ստորին շեմի աստիճանական (51%-ից 60%, ապա՝ 70%) բարձրացման հնարավորության հարցը (23-10-12-13).

2) OSCE ձևաչափը կլինիկական մոդուլներում կիրառելու հնարավորության հարցը (23-10-12-14).

8. Հանձնարարել «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակին՝

1) սկսել ուսումնական գործընթացում հետազոտությունների հաստատված արդյունքների ներդրման քաղաքականության և կանոնակարգման աշխատանքները (23-10-12-15).

2) մշակել դասախոսների մոդուլարիզացված ծրագրով դասավանդելու վերապատրաստման ծրագիր (23-10-12-16).

9. Հանձնարարել էլեկտրոնային Համալսարանի պատասխանատուին և դեկաններին՝ 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբողջապես ավարտել էլեկտրոնային Համալսարանի ուսումնական բաղադրիչի ներդրման և շահագործման գործընթացը (23-10-12-17).

10. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Ղ. ՊՐՈՖ. Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Ղ. ՊՐՈՖ. Տ.Գ. ԱԿԿՉՅԱՆ

